ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1.	Անունը, ազգանունը. **Արմեն Ղազարյան**
2.	Զբաղեցրած պաշտոնը. **Միգրացիոն ծառայության պետ**
3.	Գործուղման վայրը և ժամկետները. **Նիդերլանդներ (Հաագա), 2022թ. հունիսի 27-30**
4.	Հրավիրող կողմը. **Միգրացիայի միջազգային կազմակերպություն**
5.	Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը). **Կամավոր վերադարձի կազմակերպման հարցում նիիդերլանդական կողմի փորձի ուսումնասիրություն**
6.	Քննարկված թեմաները. **Կամավոր վերադարձի համակարգին առնչվող խնդիրներ, կազմակերպական հարցեր, թվային լուծումներ, միգրանտների պահման վայրերի կազմակերպման հարցեր**
7.	Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը. **Հայկական պատվիրակությունը, որի կազմում ընդգրկված էին արտաքին գործերի նախարարության, արդարադատության նախարարության, ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության և Միգրացիայի միջազգային կազմակերպության հայաստանյան գրասենյակի ներկայացուցչներ, Հաագայում հանդիպումներ է ունեցել կամավոր վերադարձի և վերաինտեգրման ոլորտում Նիդերլանդների Թագավորության համապատասխան կառույցների գործընկերների հետ: Մասնավորապես, հանդիպումներ են տեղի ունեցել ՄՄԿ Նիդերլանդների գրասենյակի, Ամստերդամի ՄՄԿ կենտրոնի, Ռոտերդամի՝ չփաստաթղթավորված անձանց հիմնախնդիրներով զբաղվող հասարակական կազմակերպության, Հայրենադարձության և մեկնման հոլանդական ծառայության, Հատուկ կացարանի, Սոստերբերգի պահման կենտրոնի ներկայացուցիչների, ինչպես նաև Հաագայում Հայաստանի դեսպանության գործընկերների հետ:** **Քննարկումների առանցքում եղել է անկանոն միգրանտի կարգավիճակում գտնվող օտարերկրացիների կամավոր վերադարձի եվրոպական փորձառությունը՝ նույն համակարգը Հայաստանում հաջողությամբ ներդնելու նպատակով:** **Այցը կազմակերպվել է Միգրացիայի միջազգային կազմակերպության Հայաստանի և Վրաստանի առաքելությունների կողմից իրականացվող «Հայաստանում**

Scanned with CamScanner

	և Վրաստանում միգրանտների իրավունքների և լավ կառավարման խթանում» եռամյա (2019-2022թթ.) տարածաշրջանային ծրագրի շրջանակներում: **Ծրագրի նպատակն է բարելավել Հայաստանի և Վրաստանի կառավարման մարմինների կարողությունները միգրանտների իրավունքների և միգրացիայի կառավարման հարցում, ինչպես նաև խթանել տարածաշրջանային համագործակցությունն այս հարցում:** **Այցի ընթացքում Միգրացիոն ծառայության պետը և Նիդերլանդներում ՀՀ դեսպանը հանդիպում են ունեցել նաև Նիդերլանդների արդարադատության և անվտանգության նախարարության իմիգրացիայի և նատուրալիզացիայի ծառայության ղեկավար Ռոդիա Մաասի և Մեկնման ու վերադարձի ծառայության ղեկավար Յանիտա Ռոբերսի հետ: Նիդերլանդական կողմը պատրաստակամություն է հայտնել աջակցելու Հայաստանին կամավոր վերադարձի ինստիտուցիոնալ համակարգի կայացման հարցում:** **Քննարկվել են նաև ապաստան հայցողների նոր կացարանի շինարարությանն առնչվող հարցեր, որի համաֆինանսավորողներից է նաև Նիդերլանդների կառավարությունը:**
8.	Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը. **Չկան**
9.	Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները. **Չկան**
10.	Ստորագրությունը, ամսաթիվը: 04.07.2022

Scanned with CamScanner